ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. սեպտեմբերի 3-ից 7-ը Բանգկոկում (Թաիլանդի Թագավորություն)՝ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Իրինա Ղափլանյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Իրինա Ղափլանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Բանգկոկ (Թաիլանդի Թագավորություն)

   2018թ. սեպտեմբերի 3-ից 7-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի քարտուղարություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Փարիզի համաձայնագրով սահմանված գործողությունների ծրագրի իրականացման ապահովմանն ուղղված փաստաթղթերի մշակման և քննարկման հավելյալ նստաշրջաններ

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Հանդիպման ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.

- Կլիմայի փոփոխության ազդակների, խոցելիության և հարմարվողականության մասին Նայրոբիի աշխատանքային ծրագիրը,
- Փարիզյան Համաձայնագրով հաստատված մեխանիզմները, ընթացակարգերը,
- Կիոտոյի արձանագրության շրջանակներում՝ մասնավորապես հողօգտագործման, դրա փոփոխության և անտառտնտեսության մեթոդաբանական հիմնահարցերը:

- Քննարկումների ընթացքում հատուկ անդրադարձ եղավ ազգային մակարդակով սահմանված ներդրումներին/գործողություններին, որոնք լրամշակման կարիք ունեն մինչև Կատովիցեյում կայանալիք Կողմերի 24-րդ Հանդիպումը (ԿՀ): Ըստ ԿՀ 23 նախագահ, Ֆիջիի վարչապետ Ֆրանկ Բաինիմարամայի, անհրաժեշտ է հստակեցնել ուղեցույցները, որոնք անմիջականորեն անդրադառնում են ակնկալվող արդյունքների գնահատման վրա: Նույն մտահոգությունը հնչեցին նաև Լեհաստանի Էներգետիկայի նախարար, ԿՀ 24 նախագահ Միկալ Կուրտիկայի և ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղ օվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական կազմակերպության կողմից: Վերջիններս կոչ արեցին մեկտեղելու ջանքերը՝ առավել շոշափելի և կանխատեսելի արդյունքների ապահովման նպատակով:
- Հարմարվողականության հաղորդակցության վերաբերյալ նստաշրջանում քննարկվեց իրականացման համար օժանդակության հնարավորությունը ոչ միայն Կանաչ կլիմայական հիմնադրամից, Գլոբալ էկոլոգիական հիմնադրամից և հարմարվողականաության հիմնադրամից, այլև Կլիմայի տեխնոլոգիական կենտրոն և ցանցից (CTCN) և Ներուժի հզորացման Փարիզի Կոմիտեից (PCCB):
- Հարմարվողականության հիմնադրամի նստաշրջանում ակնհայտ էր մրցակցությունը ԿԿՀ և Հարմարվողականության հիմնադրամների միջև՝ իրենց դերակատարության և արդյունավետության ուղղությամբ: Արտանետումների սերտիֆիկացված կրճատումների գների անկումը մտահոգության առիթ է տալիս հարմարվողականության հինադրամին ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների հայթայթման առումով: Սակայն հիմնադրամի կարևոր առավելությունն է վերջինիս արդյունավետությունը և առաքելությունը՝ երկրին պատկանելիությունը, փոքրամասշտաբ ծրագրերը, ուղղակի հասանելիությունը, մոնիթորինգի և ծրագրերի գնահատման փորձը:
- «Բաց երկխոսության» նստաշրջանում քննարկվեց Փարիզյան համաձայնագիրը, մասնավրապես «բաց»-երի, խոչընդոտների սահմանումների և իրականանալիության տեսանկյունից: Արձանագրվեց, որ Արդարության հայեցակարգի գործառնական կիրառումը մեծ դեր կարող է ունենալ Փարիզյան համաձայնագրի պատշաճ իրականացման գործում:
- Անդրադարձ եղավ նաև էլեկտրոնային շարժունակության (e-mobility) թեմային, որը պարտադիր կերպով արծարծվեց գրեթե բոլոր բանախոսների կողմից:
- Հարմարվողականության և թափանցիկության վերաբերյալ նստաշրջաններում անդրադարձ եղավ հաշվետվողականության գործընթացում ճկունության ցուցաբերմանը, սակայն ԱՄՆ-ն շարունակեց պնդել թափանցիկության և արդյունքների հստակեցման վրա:

7. ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

- Հանդիպում եմ ունեցել Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ազգային մակարդակով սահմանված ներդրումների/գործողությունների (NDCs) մասնագետ Լի Կանդոյի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել, ինչպես նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել Ազգային սահմանված ներդրումների (NDCs) հետագա քայլերի վերաբերյալ: Մասնավորապես նախատեսվում է առաքելության պաշտոնական այց, որի ընթացքում կվերհանվեն առաջնահերթությունները և ֆինանսական աղբյուրների հնարավորությունները:

- Հանդիպում եմ ունեցել նաև Կլիմայի փոփոխության հարմարվողականության և գլոբալ կենտրոնի,Կանաչ կլիմայի հիմանդրամի ծրագրավորում, ՄԱԶԾ - Գլոբալ բնապահպանական ֆինանսավորումը Կայուն զարգացում Խմբի քաղաքականության և ծրագրերի աջակցության բյուրոյի ղեկավարի հետ:

- Հանդիպման ընթացքում քննարկել ենք Կանաչ կլիմայի հիմանդրամի բյուջետային քաղաքականության հարցերը, ֆունկցիոնալ խնդիրները:

  Հանդիպման ընթացքում նշվեց նաև, որ այն փոփոխությունները, որոնք պետք է կատարվեն Կանաչ կլիմայի հիմանդրամում՝ կնպաստեն արդյունավետության բարձրացմանը, և, որ կառավարություններն անհատական հիմքերով կարող են նպաստել Կանաչ կլիմայի հիմանդրամի առավել արդյունավետ և արագ աշխատանքին:

  Մատնանշվեցին նաև Կանաչ կլիմայի հիմանդրամի գործնական խնդիրները: Երբ երկիրը նախագծային առաջարկի վերաբերյալ «առարկություն» չի ներկայացնում, այդ երկրի կառավարությունը դառնում է նախագծի սեփականատերը, սակայն նախագծի պատասխանատվությունը և հաշվետվողականությունը պատասխանատվությունը դրվում է իրականացնող մարմինների վրա: Այն, անշուշտ, խնդիր է առաջացնում գործակալությունների համար, սակայն, մեզ համար կան առավելություններ ծրագրի իրականացման այս ձևաչափում: Կարծում եմ, եթե մենք ակտիվորեն համակարգենք և գործակալությունների հետ սերտ համագործակցություն ծավալենք մենք կարող ենք հաջողված արդյունքներ ունենալ: Դրա հետ մեկտեղ անհաժեշտ է իրավական հիմքերի ստեղծել՝ համաձայն որի իրականացնող մարմիններն օրենքով սահմանված կարգով կներկայացնեն զեկույցներ:

- Հանդիպում եմ ունեցել նաև Հարմարվողականության հիմնադրամի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում երկրները ներկայացրեցին իրենց

դիրքորոշումը, ներգրավվածությունը և իրենց կարծիքը հիմնադրամի վերաբերյալ:

- Փարիզի Համաձայնագրի ժամանակավոր աշխատանքային խմբի հանդիպման ընթացքում քննարկվել են նաև կլիմայի հարմարվողականության և թափանցիկության վերաբերյալ հարցեր: Այս քննարկումը կարևորվում էր նրանով, որ Փարիզի համաձայնագրի երկու կարևորագույն բաղադրիչները՝ գիտությունն ու քաղաքականությունը, առաջնահերթ են:
- Ավստրալիայի ներկայացուցիչ դեսպան Պատրիկ Սոկլինգի հետ քննարկվել է «հովանոցային խումբը» և վերջինիս քաղաքական օրակարգը:
- Հանդիպել եմ Ծրագրերի ղեկավար, Կլիմայի կանաչ հիմնադրամի համակարգող Էրմիրա Ֆիդային, որի հետ քննարկել ենք ԿԿՀ խորհրդի աշխատանքները և Հայաստանի անդամակցությունը խորհրդին, ինչի առնչությամբ նա ասաց, որ շատ պատեհ պահ է, Հայաստանի կողմից անդամակցության նպատակով դիմելու համար:
- Հանդիպում է եղել Լիբանանում ՄԱԶԾ ներկայացուցիչ Մարի Ամմանի հետ:

8. <u>ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ</u>

Փարիզի Համաձայնագրի ժամանակավոր աշխատանքային խմբի ոչ ֆորմալ նստաշրջանի ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ մասնակից երկրները ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի քարտուղարությանն ուղարկեն իրենց օժանդակ մարմնի /SBI/, Փարիզի Համաձայնագրի ժամանակավոր աշխատանքային խմբի զեկույցները: Պահանջվող աշխատանքների ծավալները հսկայական են, և անհրաժեշտ է վերանայենլ, թե ինչպես պետք է Հայաստանն իրականացնի համապատասխան աշխատանքները և ապահովի ներկայացուցչությունը՝ Փարիզյան համաձայնագրով ստանձնած պարտավորությունների շրջանակներում:

9. <u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

- Իրականացնել պետական հաստատությունների ուսումնասիրություն ԿՓ իրականացվող գործողությունների արդյունքների մեխանիզմների և մոտեցումների ուղղությամբ և դրա ներքո մշակել առաջարկություն միջգերատեսչական համագործակցության և ԿՓ գործողությունների հաշվետվողականության կառուցվածքի և գործարկման վերաբերյալ:
- Ուսումնասիրել Հայաստանում գործող և ընդհանրապես առկա մեխանիզմների համակցման հնարավորությունները հարմարվողականության հաղորդակցության կազմակերպման նպատակով:

- Ապահովել առավելագույն ներգրավվածություն ինչպես Կանաչ կլիմայական հիմնադրամում, այնպես էլ Հարմարվողականության հիմնադրամում: Այդ համատեքստում անհրաժեշտ է առավել մեծ ջանքեր գործադրել ԿԿՀ խորհրդում թեկնածության ուղղությամբ:
- Նախարարության առաջիկա կառուցվածքային բարեփոխումների համատեքստում քննարկել առանձին կլիմայի փոփոխության վարչության հիմնման հնարավորությունը, որն ուղղված կլինի առանձին 3 բաղադրիչներով՝ հարմարվողականություն, մեղմում և գույքագրում:
- Հայաստանը Փարիզյան համաձայնագրի իրականացման գործընթացում պետք է պահպանի չեզոքություն և ջանքերն ուղղի ներուժի հզորացմանը՝ հնարավոր բոլոր օգուտներից, հնարավորություններից և առկա աջակցության շրջանակներից օգտվելու համար:
- Ուսումնասիրել Կոնվենցիայի ներքո առկա գործող խմբերին միանալու առավելությունները և թերությունները, հետագայում նպատակահարմարությունը որոշելու համար:
- Իրականացնել նիստերի և աշխատանքային խմբերի հանդիպումներ կառավարության այլ մարմինների հետ, Կլիմայական գործողության (Climate Action) մասին իրենց իրազեկելու նպատակով:
- Անհրաժեշտ է համապարփակ տեղեկատվություն պատրաստել նաև վարչապետի և փոխվարչապետների համար Կլիմայի փոփոխության և Փարիզյան համաձայնագրի ներքո իրականացվող գործողությունների վերաբերյալ:
- ԱԳՆ-ի հետ անհրաժեշտ է կազմակերպել աշխատանքային հանդիպում, որի արդյունքում պետք է ստորագրվի փոխընբռնման հուշագիր, որով կնշանակվի պատասխանատու անձ՝ կլիմայի փոփոխության նախաձեռնությունների վերաբերյալ բանակցություններում ներգրավելու նպատակով: Անհրաժեշտ է նաև ընդարձակել միջգերատեսչական համագործակցության շրջանակը՝ ներառելով Գյուղատնտեսության և Տարածքային կառավարման նախարարությունները (ի լրումն Տնտեսական զարգացման և ներդրումների և ֆինանսների նախարարությունների).

- Կազմակերպել հանդիպումների շարք հիմնադրամների և ոչ կառավարական կազմկերպությունների հետ, որոնք կարող են ներդրումներ ապահովել կլիմայի փոփոխության հետ կապված ծրագրերի իրականացման համար:

Բնապահպանության
նախարարի առաջին տեղակալ՝

Իրինա Ղափլանյան

Invalid signature

X

Irina Ghaplanyan
First Deputy Minister of Nature Protection of t...
Signed by: GHAPLANYAN IRINA 7709830366